վերահասու լինիլ չարութեան նախիպին։ Զոր իբրև լուան էմիրք ստամպոլու և այլոց քաղաքաց, իբր զօսպայք յարեան յոտին ի ստամպոլ, և արգուհալս արգուհալի վերայ տուեալ թագաւորին, արկին զահ ի նմա. մինչև և նա հարկադրեալ, նախ առաքեաց զգլխատեալսն զայնոսիկ ի քիւրէկն, և յետ երկուց աւուրց ի յառաւել զրգռիլ էմիրիցն, էհան ի քիւրէկէն, և էհատ առաջի դրան սարային զգլուխ նոցա։ Դարձեալ յաւուրս յայսոսիկ, արքունի հաթթիշէրիֆսն առաքեցաւ յաքսորս ի յստամպոլու ի յէջմիածին ի պատրիարքէ քաղաքիս, անէմ աբրահամ վարդապետն, որ երբեմն էր առաջնորդ իզմիրու։ Պատճառն այս եղև, զի սա տարի մի է, որ թողեալ զառաջնորդութիւնն իզմիրու աստ էր, և ջանայր ինքն լինիլ պատրիարք ստամպոլու. բայց իբրև ետես թէ զայլ ոք արարին, և ոչ զինքն, և ինքեան հրամայեցաւ երթալ յէջմիածին, խորհեալ ընդ իւրոց համախոհից[1]... գրեաց կաթուղիկոսին, զի զնա դիցէ ի ստամպոլ ինքեան վէքիլ, որպէս զոն ի ստամպոլ վէքիլք այլոց աթոռոց, այսինքն է երուսաղէմայ, սուրբ կարապետի, ևն, որով կարասցէ մնալ ի ստամպոլ, և իբրու երկրորդ պատրիարք գործել զոր և կամիցի։ Եւ կաթուղիկոսն ևս գրեաց ըստ կամաց նորա աստ ի ստամպոլ ամիրայից և պատրիարքին, բայց նոքա ոչ հաճեցան ընդ այս, ուստի իբրև տեսին թէ խռովութիւնս յարուցանէ վասն այսր... աբրահամն, արքունի հրամանաւ առաքեցին զնա յաքսորս անդ ի յէջմիածին...։

1764 Հոկտ. 18 Նուաստ ծառայ
[Կ. Պոլիս] Հ. Զաքարիա Վ. Ալեքսանեան]

## ՄԾԳ.

Այս կարճ վաւերաթուղթը մեր ազգային եկեղեցական պատմութեան մէկ շատ կարևոր հարցը կը շօշափէ, և որ անշուշտ կարևորագոյն և աւելի յարգի կը դառնայ՝ որքան երբ Նկատուի հեղինակին միջազգային արժէքն ու համբաւը։

Ասսեմանիի կարծիքն է մեր Ս. Գր. Լուսաւորչայ Հռովմ ուղևորութեան մասին. խնդիր մը որ շատ թերուդէմ տեսութեանց առիթ եղած է մեր մատենագրութեան մէջ ժամանակի ընթացքին։ Երևելի հեղինակիս յայտնած կարծիքը կու գայ աւելի զօրացնել Հ. Յ. Ալգերի (այժմ մեր Գերյ. Աբրահայը) փաստերը (տես Բզմ. 1914 էջ 274–286)։

Գերապատիւ և ամենապայծառ տեառն Ստեփաննոսի ևն.

... յաղագս դաշանց գրքի բանին, զոր գրեցիք տեղեկանալ... ունիմ զայն ի մտի, բայց միջոցքն պակասին, զի պարտ է տեղեկանալ զայն ի ձեռն ասսեմանիին, որ... և ոչ կամի զպայծառութիւն այլոց արևելեան ազգաց, բայց եթէ զիւրոյ ազգին...։... Թէպէտև հարցանելն իմ ցնա վասն այնր գրոյ դաշանց՝ է ընդունայն. զի ոչ գոյ այնպէս գիր և ոչ իսկ այն պատմութիւն գալստեան լուսաւորչին ի հռոմ համարի առ սոսա ստոյգ. յառաջին տարւոջ, յորժամ գնացաք առ ասսեմանին, բան եղև վասն այսր խընդրոյս, և նա ասաց. ամենևին ոչինչ յիշատակ գոյ առ լատինացիս վասն այնր գալստեան. և թէ կարէ լինիլ թէ լուսաւորիչն ընդ տրդատայ գնացեալ է ի ստամպոլ, որ կոչեցաւ նոր հռոմ, ուրեմն լսելով յետագայից, թէ գնացին նոքա ի հռոմ, կարծեցին թէ այն իցէ հին հռոմ, ևն. զայս յայնժամ ասաց ցմեզ ասսեմանին։...

Նուաստ ծառայ
ի հռոմ 1765 փետր. 28 Հայր Մկրտիչ Անանեանց

1. Հ. Իգն. 1764 Հոկտ. 19-ին գրած մէկ թղթով կ'ըսէ, որ «համախոհ էին ամենայն պարսկահայք հանդերձ վարդապետիւն, որ գաւազանը կիւզել կոյի»։